մտ 13-02
18-03-2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«14» 03 2024 թ. N ՍՄ/ԱԳ-2-4/8873-2024

Ձեր՝ 02.02.2024 թ.
N 07-01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԻՄ-ԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ
profrosgu@gmail.com

Հարգելի՛ տիկին Ասատրյան,

Վարչապետի աշխատակազմից 06.02.2024 թ. N 14.01/14.6/4317-2024 գրությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն վերահասցեագրված Ձեր գրության կապակցությամբ հայտնում եմ, որ այն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 09.02.2024 թ. N ՍՄ/ԱԳ-2-4/4531-2024 գրությամբ ուղարկվել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների վերաբերյալ տվյալներ պարունակող տեղեկատվական շտեմարանը Միասնական սոցիալական ծառայությանը փոխանցելու առաջարկության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնելու նպատակով:

Ըստ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ 27.02.2024 թ. N 803-24 գրությամբ ստացված տեղեկատվության՝ նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 10.06.1993 թ. ներդրված ավանդների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանն իրենից ներկայացնում է ավանդատուների, վերջիններիս ավանդների մասին ամբողջական տեղեկատվություն, ուստի «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի համաձայն՝ հանդիսանում է բանկային գաղտնիք, ինչպես նաև պարունակում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքով նախատեսված անձնական տվյալներ:

Հաշվի առնելով վերոգրյալը, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ առանց հաճախորդների համաձայնության իրավասու չէ երրորդ անձին տրամադրել/փոխանցել տեղեկատվական շտեմարանում առկա անձնական տվյալները և բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Կենտրոնական բանկից 13.03.2024 թ. դրությամբ խնդրո առարկա հարցի վերաբերյալ պատասխան չի ստացվել:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ
ԵՎ ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

3/14/2024

X

ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Signed by: GALSTYAN ANAHIT 7612650088 **ԱՆԱՀԻՏ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կատարող՝ Ա.Ավագյան
Կենսաթոշակային ապահովության և
այլ դրամական վճարների վարչություն, 010 56 42 10